



ՄԱՐԿԵՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

Դառն երբայիք լրագրեցեալն համարն
ծախքը առնողին վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ եւ
իցէ գրուի թմբագրին պիտի ուղ-
ղուի. եւ ասոց համարն ծախքը իւր
կողմն վրայ է:

6 գինն է 6 Արծաթ Մեծիտի.
նայ 21/4
նմուցումը տողին 2 դարու է
լրութիւնները կ'ստանան 66:
Լրագրութիւնները ամսն ամսայ ին 6 եւ
6 կ'ստանան:

ԿԱՌԱՆԴԱՆՈՒԹՅՈՒՆ 18 ԱՊՐԻՒՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՌԱՐԱՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ
1 ռոտար 25 ապրիլ.
«Այսօր Քաղաքի Հասակն մէջ
գեղատեսիլները դուրսորդեցաւ»:

Փարիզ 25 ապրիլ.
«Բանի մը հազար Վաղիներ և
Պետեկներ թուումով փաշային դէմ
դէմ փերուցին և հարկերու հատուցու-
մը մերժեցին՝ Առտայի և Արապի մէջ
պանուած արար ցեղերուն երկիրները զար-
կին ու կողոպտեցին, և թուումով ներ-
քին դաւաճաց հարգարկեցութիւնը խա-
փանեցին: Այս ապստամբական շարժու-
մին ընդհանրապէս վայել է»:

Փարիզ 27 ապրիլ.
«Դեսպանաժողովին մէջ զինադա-
դար առաջարկեցաւ: Աւստրիոյ և Ռու-
սիոյ երեսփոխաններն յայտնեցին որ
այս մասին հրահանգ մը չունին: Աւստի
գեղատեսիլները մինչև այս հրահանգն
բուն գալը կ'սին մնայ»:

«Այնպէս Վաղիք լրագրողը զինա-
դադարման ընդունուելուն վրայ կը տա-
րակուի. սակայն կը յուսայ թէ բանակ-
ցութիւնները կը շարունակեն, և Աւստ-
րիոյ կառավարութեան արեւմտեան աւե-
րութեանց հետ ունեցած յարաբերու-
թիւններն անշիջող կը մնան»:

1 ռոտար 22 ապրիլ.
«Արիւստրիոյ զօրապետը փառապա-
հանքով պատմաւանդեց Քարբէրա կըլ-
զին պիտի դառնայ»:
«Դառնեցուն մէջ հրապարակաբոս-
ներ կ'ըսեն թէ այս մեկնուելու խորհուրդը
կառավարութեան թերաբարութեամբն է:
Հետեւաբար հասարակութեան ժողովն
ընդ իրենց ահաճութիւնը կը յայտնեն»:

1 ռոտար 22 ապրիլ.
«Գահաժառանգ Վաղիքի իշխանը
Արիւստրիոյ զօրապետին այցելութիւն մը
ըրաւ որ ժամ մը տեսնէ»:

Պատերազմի երկուսն հեղհեղեղ կը
փարտախ՝ քանի որ դարունը կը յառաջա-
նայ. բնական աշխարհի հորիզոնը պատող
ձմերային սև ամպերուն պէս քաղաքա-
կան հորիզոնին վրայ տեսնուած ապստամ-
բից ամպերն ալ փարտախ կ'սկսին, և ա-
մերիկեանութեան արամադրութիւններով
հասարակաց կարծիքը կ'անդորրի, առանց
հաշուելու զիպոց անակնկալ բերումները
որ կրնայ ամեն նախատեսութիւն ու հա-
շիւ վեր ի վայր շնչել»:

Հեռագիրն արդէն իմացուց թէ Տա-
նիմարայի խնդրոյն կարգադրութեանը
համար առաջարկուած գեղատեսիլները
արդէն գումարիւ սկսած է. թէպէտ ի
սկզբան գեղատեսիլները յաջողութեամբ
յուսուել կը թուէր շատերուն, սակայն
Անգլիոյ և Վաղիքի մէջ այս օրերս եր-
ջանկաբար տեսնուած համաժողովեան
կամ մտերմութեան նշանները ոչ միայն
Տանիմարայի խնդրոյն կարգադրութեան

յոյսերը կը զօրացնեն, այլ և ուրիշ եւ-
րոպական կիճռոտ խնդիրներու խաղաղա-
պէս լուծման հաւանականութիւնն ալ
կաւելցնեն»:

Անգլիոյ Տանիմարայի խնդրոյն լուծ-
մանը համար Վաղիքի զօրապետութեան
կարեւորութիւնը կամ մանաւանդ անհր-
ժեշտ պէտքը զգալով, վերջապէս զինքը
է կըսեն Վարդիսի կայսեր առաջարկած
արքայաժողովն ընդունելու: Այս Բը-
լադիսի Փարիզ երթման այս նպատա-
կաւ էր կըսեն»:

Վաղիքի և Անգլիոյ լրագրաց խա-
քերուն նայելով՝ երկու կառավարու-
թեանց համաձայնութիւնը կատարեալ է:
անանկ որ Աւստրիոյ կառավարութեան վը-
տանդ ապառնացող ներկայ դժուարին և
ծանր խնդրոց ամենուն մէջ ալ միակերպ
և միաբան դիրք մը պիտի բռնեն և ա-
նոնց լուծմանը աշխատին: Այս նպատա-
կաւ գեղատեսիլները արքայաժողովն փո-
խելու դիտարկութիւն ունին եղեր»:

Աւստրիոյ լրագրողներն անոնք և մաս-
նաւորապէս Վիեննայի Բաժն լրագրին
ալ կը հաստատեն այս լուրը»:

Վաղիքի լրագրողը կայսր խորհրդաբար ի-
մացուց, կըսէ, Անգլիոյ և Աւստրիոյ կա-
ռավարութեանց թէ ինքը յօժար է Տա-
նիմարայի վեճին կարգադրութեանը ձե-
ռնուելը ըլլալու, և այնպիսի լուծում մը
ձեռք բերելու՝ որ թէ՛ Անգլիոյ և թէ՛
Աւստրիոյ համար միապէս զոհացուցիչ
ըլլայ: մինչև անգամ յօժար է Շվեյցրի-
այի ժողովրդաց կամքն հար-
ցունելու կամ քուէն խնդրելու առա-
ջարկութեանը ձեռնութեամբ ըլլալու, բայց
սա պայմանաւ որ գեղատեսիլները ոչ
միայն Շվեյցրի-այի ժողովին խնդրոյն
զեպտի, այլ Աւստրիոյ կառավարութիւնը
փոփոխի մէջ ձեռք ուրիշ ամեն խնդրոց ալ»:

Վաղիքի կառավարութեան այս ա-
ռաջարկութիւնն այս անգամ աւելի յա-
ջող ընդունուելութիւն գտաւ, կըսէ յիշ-
եալ լրագրողը: Այս միայն Քիւլմերի կոմի-
տէ և լրտ Բալմերսթին, այլ և Արչաքոֆ
իշխանն ալ պատասխան տուեր են թէ
պատրաստ են այս առաջարկութեան վրայ
բանակցելու»:

Աւստի երեւոյթ կայ որ Աւստրիոյ
քաղաքական կացութիւնը նոր փոփոխու-
թիւն մը կրելու վրայ է»:

Տիւրքի ամուսն ալ զինուորական
կարեւոր դէպք մ'է՛ որ կրնայ մեծ ազ-
դեցութիւն ունենալ գեղատեսիլները
որոշմանը վրայ»:

Ապրիլ 6/18 երկու շաբթի առաւօ-
տուն եղաւ վերջին մեծ յարձակումը, ու
բուն մէջ Ռուսիոյցիք վերջապէս յաղ-
թող ելան: Տիւրքի ամուսնութիւնն
բուն արեւելին: Բայց այս յաղթութիւնը
շատ սուղ նստաւ իրենց: Տանիմարայի
ալ 4000 մարդ կորսնցուցին, որոց 2000ը
Ռուսիոյցիք ձեռքը դերի ինկած են, և
2000ն ալ մեռած ու վիրաւոր են»:

Այս յաղթութեան լուրը չափազանց
ցնծութիւն պատճառեց Պէրլինի մէջ և
հրապարակական մեծ հանդէսներու ա-
ռիթ եղաւ: Ռուսիոյ թագաւորն հե-
ռագրով շնորհակալութիւն յայտնեց իւր
զօրքերուն, և երկու օր ետքն ալ անձամբ

իր խնդակցութիւնը յայտնելու գնաց»:

Ժիւլիանի մէջ ալ զինուոր լրագրող
նպատակաւ Տանիմարայից: Աւստ-
րիո-Ռուսիական զօրքերն անարդեւ յա-
ռաջ կը քաղեն Ժիւլիանի մէջ, և ար-
դէն Տանիմարայի երկիրներուն մեծ մա-
սին ասոց ձեռքն անցած է»:

Վիեննայի «Ռեզումե» թղթակ-
ցութիւնն անուամբ լրագրին յայտարար-
ութիւն կըսէ թէ Աւստրիոյ և Ռուսիոյ
տէրութեանց կողմանէ Գանուբեան իշ-
խանութեանց երկիրները զօրք զփուելու
և զինուորական միջամտութիւն ըլլալու
լուրերն անհիմն են»:

Վաղիքի և Տիւրքիոյ մէջ ձեռ-
բակութիւնները կը շարունակեն, և
բաղձալիւ անձինք Աւստրիոյ զինուորա-
կան ատաններէն դատուելով՝ գաւազա-
նի հարուածներ ուտելու կը դատապար-
տուին»:

Վաղիքի լրագրողները կը բողբեն այս
բարդարտական և նուազագոյն պատ-
ժան դէմ, որուն միակ արդիւնքը ժողո-
վրդեան ատելութիւնը սաստիկացնել է
կըսեն Աւստրիոյ կառավարութեան դէմ»:

Վաղիքի Մոնիթոր լրագրին իր
ապրիլ 17 թուոյն մէջ գաղղիական զօրաց
Մէքսիկա մնալու պայմաններուն վրայ
Վաղիքի և Մէքսիկայի կառավարու-
թեանց մէջ եղած դաշնադրութիւն մը
հրատարակած է»:

Այս դաշնադրութեան համաձայն
գաղղիական զօրքերը կարելի եղածին չափ
չուտով Մէքսիկայէն պիտի մեկնին, և
մնալի 8000 կամաւոր զօրաց դուռը մը
պիտի կենայ երկրին մէջ: Իսկ այն քա-
ղաքաց պահպան զօրքերը՝ որոնք լոկ մէք-
սիկացի չեն, գաղղիայի հրամանատարնե-
րու սակ պիտի դրուին»:

Նոյնպէս յառաջիկայ յուլիս ամսն
սկսեալ բոլոր զօրաց պիտի Մէքսիկայի
կառավարութիւնը պիտի հոգայ»:

Վաղիքի կառավարութեան տրուելու
համար որոշուած հատուցումը 270 միլիոն
ֆրանքի եղած է, և Մէքսիկայի կառա-
վարութիւնը տարուէ տարի 25 միլիոն ֆը-
րանք տալով պիտի վճարէ Վաղիքի»:

Եւսէ գաւ Վաղիքի հրատարակելուն
տրուելից հատուցումն ալ յանձնաժողո-
վն մը ձեռք պիտի կարգադրի»:

Վերելիայէն եկած լուրերը կը ծա-
նուցանեն թէ գարնան սկիզբէն ի վեր պա-
տերապի նորէն սաստիկացեր է»:

Հիւսիսայնոց բանակին ընդհանուր
հրամանատար Արչեթ զօրապետը Մաք-
Քլէյն և Ֆրեմոն զօրապետները նորէն
պաշտօնի կանչեր է»:

Իսկ հարաւայինը ալ Քէնթուքի
նահանգին մէջ յաջողութեամբ կը յաւա-
շանեն եղեր»:

Հիւսիսային նահանգաց երեսփոխա-
նական ժողովը միաձայնութեամբ յայտա-
րարութիւն ըրաւ թէ չէր կրնար երբեք
հաւանութիւն տալ որ Վերելիայի հա-
սարակապետութեանց աւերակներուն վը-
րաց միապետութիւններ կանգնին Աւրո-
պական տէրութեանց զօրապետութեամբ:
Այս յայտարարութիւնն յաջող նը»:

շան մը չէ Մէքսիկայի նորահաստատ կայս-
րութեան ապագային համար»:

Պոնապէս մարտ 27 թուով լուր կու-
տան թէ Վաղիքի Վիլիսն երկու եղ-
բայներն իրեն դէմ ապստամբեր են:
Պոնապէս նաեւ թէ անցեալները Պոնա-
պէսի մէջ գերի բռնուած երեք խոտարնի
վաճառականները զլսատուեր են»:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Եւրոպոսի փոխարքայ բարձր. Իս-
մայիլ փաշային կայսերական զօրաց համար
Վաղիքի շնեւ տուած հազար հաս շնը-
տաւոր ընտիր հրացանները տալիսներով մեկ
տեղ անցեալ շաբթու մայրաքաղաքս հա-
տան: Օգոստոսիառ Ինքնակալը հա-
նելով այն հրացաններուն՝ հրաման ը-
րաւ որ իր անձնական դանձէն 41000
լիւրա տրուելով՝ անոնց նմաններն ար-
քունի զօրաբաններուն մէջ շնե-
րու համար պէտք եղած գործիքները
Աւստրիայէն բերուին: Յիշեալ հրացան-
ներուն կողմերը շնեւ համար ալ 8000
լիւրա շնորհեց»:

Վաղիք գաւ հրաման ըրաւ որ թէ՛
Վոսիոյի ներուցին ամբութիւններուն
նորոգման և թէ՛ անոնց համար պէտք
եղած շերտաւոր թնդանոթներուն ծախքը
նոյնպէս կայսերական անձնական դանձէն
վճարուի»:

Վանյոյց գաւ մեր բարեկեան Ինք-
նակալ թէ՛ արքունի թնդանոթարանի
պիտոյից, և թէ՛ նորահաս ուսման
պատրաստութեան և թէ՛ կայսերական
նաւարանին և ձուլարանին պէտք եղած
պողպատը հայթայթելու համար նոյնպէս
անձնական դանձէն երեք հազար քսակ շն-
որհեց, որպէսզ արդարաւոր նոր գործա-
րան մը շնուի»:

Վաղիք կիլիկի օրը մայրաքաղաքին
Քառանթիոյի ժողովն արտաքոց կար-
գի նիստ մ'ընելով որոշեց որ Օսմանեան,
Պարսից և Վիլիստեան սահմանադրու-
նեան վրայ գրուած Քառանթիոյի
գեղաշուքիւններ վերան: և այս որոշման
համաձայն հրամաններ ղեկուցան վերո-
յիշեալ տեղերը»:

Կայսերական հրամանաւ՝
Վիլիսի կուսակալ Սիւլէյման փա-
շան Խորնէի կուսակալ անուանեցաւ:
Թուրքիոյ կառավարիչ Քառանթ փա-
շան Վիլիսի կառավարիչ անուանեցաւ:
Սապրի Էֆենտին Միրմիրանի աս-
տիճանաւ Թուրքիոյ կառավարիչ անուա-
նեցաւ»:

Վանայ կառավարիչ Վէյսի փա-
շան արքունի դանձուն թափախելով մե-
մուրի անուանեցաւ»:

ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

Դառնական լրագրին իր վերջին թուոյն
մէջ Տիւրքական խորհրդոյ արձանագրու-
թիւններն աչքէ անցնելով հետեւեալը
կը քաղենք ի հրատարակութիւնը ըսելով,
Սիւլեյման Քառանթիւն ապրիլին նկատմամբ
յուլիս 24 թուով հին արձանագրու-

Թիւերը կը հրատարակէ, որով կը պարտաւորէ Տնտեսական խորհուրդս պաշտօնական կերպով դիտարկելու ընել յիշեալ յօդուածին վայրը:

Դամանակ լրագիրը յունվար 24-ին արձանագրու թիւերը միայն հրատարակելով՝ ցանց առած է յիշել մարտ 13, և 27 թուականներով միեւնոյն խնդրոյն վերաբերեալ արձանագրութիւնները, որոնք կը յայտնեն թէ Սիւնեան հարու թիւն աղայն յօժարակամ հաճութիւն կուտայ Սահմանադրութեան Եւ տարեգարձին առ թիւ 1-ի նպատակ հաւանդանոցի հաւաքեալ ստակը ազգային Սարգսութեան յանձնուելուն: Եւրդ, Դամանակի խորագիրը՝ իրրեւ ազգային պաշտօնական անձ ուրիշ լրագրապետներէ տարձան մ'աւելի պարտականութիւն ունենալէ ի պատ պայտիսի փախուի կէտերու մէջ սպասելու որ Սարգսութիւնը խնդիրն աւարտելէ յետոյ արդիւնքը հրատարակէ, անժխտելի պարտականութիւն մ'ալ ունէր հին արձանագրութեան յաջորդող նորերն ալ հրատարակելու, որոնք առաջինին հակառակը կը յայտնեն: Դամանակը հակառակութիւն կը յարուցանէ ըսելով թէ «Տնտեսական խորհրդոյ արձանագրութիւններն աչքէ անցընելով հետեւեալը կը քաղենք՝ ու մինչ նոյն արձանագրութեանց մէջ իր գրածին հակառակը ցոյց տուող արձանագրութիւններ կան, որոնք կամ աչքէ անցուցած է և կամ ո՛ր և իցէ դիմամբ չտեսնել ուզած է»:

1864 ապրիլ 13 Կ. Պօլս (ԲԷ)
Դամանակը Եւ Տնտեսական
Խորհրդոյ

... խորագիր ...
Թաղական տրոց համար անցեալ ամսոյ 27 թուականով խորհուրդս ծանուցադիր մ'ընդունելով Տնտեսական խորհրդէն, փութաց անմիջապէս դադարեցնել Ս. Եկեղեցւոյ մէջ թաղականներու չորագրութիւնը և և իւրաքանչիւր հաւաքումը, որով Ս. Երանգութեանց միջոցով տեղի ունեցող յիմովութեանց ալ դադարը կը տեսնէ ուրիշութեամբ արտի: Խորհուրդս իր պարտուց կատարման ըսկըդնադրութեան մէջ թաղին ժողովրդական ալ թաղական տրոց մասին ունեցած ջանքն ու յօժարամտութիւնը նկատելով աւելի կը խորախորհ իր պաշտօնին մէջ: Կը յուսայ միւսանալոյն միշտ բարեկարգ տեսնել թէ իւր և թէ ամեն թաղի գործերն ինչպէս ազգային Սահմանադրութեան տրամադրութեանց ունեցած իրական սիրոյն:

Ընդունեց և ալ իս
40 ապրիլ 1864 (ԲԷ)
Կ. Պօլս Թաղական խորհրդոյ
Կէտք փաշա թաղի

Միասնայէն ապրիլ 3 թուով դրուած նամակի մը մէջ հետեւեալ տեղեկութիւնները կարգադրով, արժան կը համարինք ազգային Արժանիան ժողովոյ ուշադրութեանն յանձնել:

«Տեղւոյ ազգային լուրերուն մէջ նոր բան մը չկայ թէ՛ հոս և թէ՛ Մարզումնի դպրոցներն ամենախեղճ վիճակի մէջ են: Ինչպէս որ գիտէք, Մարզումն 30 տունի չափ բողոքակիցն կան և մնացին իսկ երկու տարիէ ի վեր հռոմէաբան եղողներուն թիւը 200ի ելաւ, և այս օրերս առաջնորդին ալ Պօլս գնաց եկեղեցիի մը շինութեան հրամանագիրն առնելու համար: Ստոյղ տեղեկութիւններով համոզուած ենք որ եկեղեցին շինւած ձիւն պէս հռոմէաբան եղողներուն թիւը երեք չորս հարիւր տան պիտի հասնի, և խիստ հաւանական է որ բոլոր Մարզումնի ժողովուրդը՝ որ 5-600 տուն կենէ, ամենն ալ կրօնափոխ ըլլան: Հոս հռոմէաբան վարդապետները թէ՛ և կեղեցւոյ և թէ՛ դպրատան համար ժողովուրդէն ստակ մը ծախք չառնելէն զատ, անոնց արքունի տրոց և ուրիշ պարտուց վճարման համար մեծամեծ օգնութիւններ ալ կընեն բաց ի բարոյական նպատակներ: արդէն 300 աշակերտ ունին դըստըդին, որոնք սկզբնական ուսմանց մէջ վարժուելէ զատ՝ դպրոցներէն լեզուն ալ կը սովորին: Հայ մարտպետ մ'ալ բերած են Պօլսէն, որ հարիւրի չափ հայ ազ-

ջեկանց ընթերցանութիւն, դիր, քրիստոնէական վարդապետութիւն, ասորիւ, դործութիւն և այլն կը սովորեցնէ: ...
«Իսկ մեր առաջնորդը հինգ ամիսէ ի վեր հոս և քանի մ'օրէն Մարզումն ալ վանքը պիտի վերադառնայ: ...»

«Երկրորդայէն ապրիլ 12 թուով դրուած նամակի մը կը ծանուցանէ թէ չորակայ դիւղերէն Պարտիզակի մէջ ալ կրօնափոխութեան պատճառաւ ազգային պաշտօնում մ'ըլլալով, վիճակին առաջնորդ Պ. Եր. Ստեփաննոս Ս. արքեպիսկոպոսն անմիջապէս փութեացեր յիշեալ գիւղը գացեր է, և կը ջանայ եղբւր տեղւոյն Բողովուրդէն ի սէր և ի միաբանութիւն յորդորելով դժբաղդ երկպառակութեան առաջն առնուլ:

Լրագրոյ 634 թուով հրատարակուած Օրթալիւղի Աղքատախնամ տիկնանց ընկերութեան վրայ հետեւեալ տեղեկութիւնները դրուած են մե՛կ՝ հրատարակելու խնդրանքը:

Օրթալիւղ 5 ապրիլ 1864.
... խորագիր ...

Մեր ազգին ընկերական դարգացման մեծապէս նպաստող բարեկամական ձեռնարկութեան մը լուրն ազգայնոց ուշադրութեանն արժանի ըլլալուն վրայ երբէք չկասկածելով, կը փութամ ձեր ազգօգուտ լրագրոյ միջոցաւ նոր հրատարակութեան խնդիրը իւր անոր կաւերութիւնն աւելի դաւի ընկելու համար, բուն իսկ նիւթին վրայ խօսել յառաջ՝ պարտ կը համարիմ ընդհանուր նկատմամբ մէկ քանի խորհրդածութիւն ընել:

Մարդկային ազգի ընկերական դարգացման և յառաջագիտութեան սկզբնապատճառ եղող սկզբանց մէկն ալ երկու սեռի դաստիարակութիւնն ըլլալը, բոլոր քաղաքակրթութեան ազգերն անհամար փորձերով դոյց տուած են: Ինչպէս է որ երբ ընկերութիւնը կազմուի մէկ մասը միւսին պէս բարոյական և մշտաւարական մի և նոյն կարողութիւնները չունայ և քաղաքական բարեկամութիւններէ զուրկ ըլլայ, անտարրական երկու կողմի հակառակ դրութիւնները յառաջագիտութեան արդեւքը կը լլնան և պատճառ խախտման ընկերական դարգացման: Բայց երբ երկու սեռը հաւասարապէս ունենան մի և նոյն բարոյական և մշտաւարական կարողութիւնները, յայնման երկու կողմի լուսաւոր դարգացմանը մէկտեղ աշակերտելով՝ կրնան յաղթող հանդիսանալ այն ամեն դժուարութեանց՝ զոր տղիտութիւնը կը յարուցանէ յառաջագիտութիւնը խախտելու համար: Քանի որ ընկերութեան դարգացումը կը պահանջէ միանգամայն երկու սեռի օժանդակութիւնը, զիւրիւն է հասկնալ որ մեր ազգը գեղեցիկ սեռին օժանդակութեան նոյնչափ կարօտ է, որչափ քաղաքակրթութեան կատարելութեան հասնելու փափագ ունենայ, և ընկերութեան բարոյական և նիւթական դարգացումը խնդրէ:

Յիշուի այս նիւթին վրայ խօսելու համար հարկ երկար յօդուած մը բաւական է բացատրել այս դրութիւնէ յառաջ գալիք ամեն օգուտները: Բայց վերոյիշեալ ձեռնարկութեան կարեւորութիւնը յայտ բոլորակաբար, ուղեցի այս դիտողութիւնն ազգայնոց ուշադրութեան ներկայացնել, որպէս զի ազգայնոց շարժումը ապագայութեան դէպ ի յառաջագիտութիւն և քաղաքակրթութիւն ուղղուելու համար, իրական սեռի գործակցութեան օգուտաւ ըլլալը ծանօթելով՝ անոր յարմարութեան և հանճարին սեփական գերն իրմէ չզրացուի: Այս յիշատակութիւնը՝ որ ազգային շարժումն աւելի կը զօրացնէ, արդարեւ բաւական է զմեզ շուտով այնպիսի կացութեան մը հասցընել, որուն հնորէքները քաղաքակրթութեան ազգերը լիովին կը վայելն:

Շատ տարիներ չէ, երբ աղըր դարեւոր թմբուցէն սթափելով ժամանակին վերանորոգիչ ընթացիկը հետ ինքն ալ սկսաւ շարժիլ, և ազգայնութեան ոգին զօրացնող զգուշացման իր մէջ ընդունելով իւր թըշուառ վիճակին դարման տանելու փոխելու և հոգըն ունեցաւ, կուտակցութեանց մէջ արմատացած ազգայնութիւնը՝ ի սկզբնական պատճառ եղած էր խախտման շատ մը կարեւոր միջոցներու գործագրութեանը, որոց կարգէն էր գեղեցիկ սեռի կրթութիւնը հասարակաց դաստիարակութեան մէջ մտցնելու: Գրութիւնը:

Բայց ժամանակը մեր կուտակցութիւններէն հետ գէտէ տղիտական նախադաշարմանք և քաղաքականութիւնը կը հեռացնէր, և

յիշեալ միջոցներուն կարեւորութիւնն անոնց աչաց առջեւ կը դնէր: հասաւ այն նշանաւոր օրը, որում մեր ընկերութիւնը իր մէջ ընդունել երկու սեռը հաւասարապէս կրթելու և ուսուցանելու վերաբար և լուսաւոր սկզբունքը:

Այնուհետեւ վերակենդանութեան տարբեր աւելի եւս գործութիւն ստացաւ: յառաջ՝ որ մեր ազգային շարժումը տկար ընթացքով կը յառաջանար և շատ անգամ մեծ ամեծ արգելքներ կը խախտէին յառաջագիտութեան մեծ գործը, իրական սեռը դատարարականութեան հնորէի իւր պարտականութիւնները ծանօթելով՝ անձնուէր գործակցութեամբ փութաց իւր օժանդակութիւնն աշակցել մեր ջանից հետ:

Ժամանակը և քաղաքակրթութիւնը հետգհտէ իրական սեռին մէջ ազգայնութեան ոգին աւելի ևս տարածելով, տիկնայք արդարեւ զօրութեան արժանի ձեռնարկութիւններ ունեցան, որոց միայն մէկ կամ երկուքը հոս նշանակել բաւական պիտի ըլլայ ապագայութեան թէ անոնց յարմարութիւնը մերինն ոչ նուազ օգտակար ծառայութիւններ ընելու համար պատրաստուած է: Գեո երկու տարի չընէր երբ անիշխանութիւնը ազգային կատարութիւնն երեսի վրայ ձգած ըլլալով, ազգային հիւանդանոցն ողբալի վիճակի մէջ կը գտնուէր, մի ապաքէն տղին տիկնայք կարեկցաբար փութեացին իրենց մէջ խնամակալութիւն մը հաստատել չիւանդանոցի թըշուառ անկիւնոց նպաստամատոյց ըլլալու համար:

Նոյնպէս մեր գիւղի արդըր Հոլիսիմանց վարժարանի խնամակալուհի տիկնանց մարմինի խնամող յանձնուած օրիորդաց քիչ ժամանակէն մէջ ստացած յառաջագիտութեան ակադեմիայի վրայ ըլլալով, բաւական զօրաւոր փաստ կրնայ համարուիլ նոյն վարժարանին քառամեայ անխորտի ընթացքը, մէ թէ միայն այն տիկնանց ունեցած յարմարութեան և արժանաւորութեան, այլ և իրենց հաստատամտութեանը:

Այս համառօտ յիշատակութիւններս ընելէ յետոյ, որոնք ըստ ինքեան մեր ազգին համար գոյութեանը նշանակուելու պատուին արժանի են, ուրախութեամբ որով բոլոր ազգայնոց կը փութամ հաղորդել «Աղքատախնամ ընկերութիւն» անուամբ ընկերութեան կազմը իւր, որ գիւղիս աղւաթը ճիկնայք այս օրերս հաստատեցին՝ իրենց դիտարկութեան նպատակ ունենալով ազգատը իւր թշուառ վիճակէն ազատել:

Արդարեւ չնախարհիք ձեռնարկութիւն մը, որուն գործակիւր զի՞նչ և ողորմութեան աշխատանքն զգացումն է: Թէ որ պատկառող լեզուի մը տալը զօրացնելու համար շնորհուած կաթիլ մը ջուրը երկնային վարժարութեան արժանանայ, միջախ ևս ստուել ազգատէր ճիկնանց այս բարեկամական ձեռնարկութիւնն աւելի մեծ վարժարութեան արժանի կրնայ ըլլալ, որ լազմութիւն տարաբաղդ անանկայ թշուառութեանց սխալումն պիտի ըլլայ և պատճառ անոնց երջանկութեան:

Աղքատախնամ ընկերութեան յայտարարութիւնն պիտի տեսնուի, թէ ընկերութիւնը իւր բոլոր գործողութիւնները տանելիւ տիկնանց բարեկամայն Տնօրէն ժողովոյ մ'անուշական հակողութեան յանձն յանձնուած է: Յիշեալ Տնօրէն ժողովը Սահմանադրապէս կազմուի է իրեն մէջ ունենալով ատենապետ, անօրէն, գանձապետ և տաննապետ:

Ահաւասիկ անգամակից անիւ: Տիկնանց անուններն:

- Տիկնայ Աղապի Եւստուֆեան
- » Ալէմ Զայեան
- » Ալէմ Պայիկեան՝ Տնօրէն:
- » Անիկի շանըման
- » Բուրուկ Երազեան
- » Եղիսաբէթ Եւստուֆեան՝ Գանձապետ:
- » Եֆրայիմ Սիմանեան
- » Իսկուհի Գաբրիէլեան
- » Նազըր Վահանեան Ատենապետ:
- » Նեմէդար Պուլիսեան
- » Նուսեա Կարմիրեան
- » Տիկնայ Բարեկամեան

Օրիորդ Սիմոնի վահանեան Օղեական ատենապետ:

Ընկերութիւնն ամսական հինգ զօրուշի կամաւոր նուէր մը սահմանած է, զոր Տնօրէն ժողովը պիտի հաւաքէ իւր նպատակին գործածելու համար:

Արդէն Տնօրէն ժողովոյ անգամակից տիկնանցին ունեւ, որոնք Սրբոց Հոլիսիմանց վարժարանին խնամակալներն են, ի վաղուց իրենց արժանաւորութեամբ ծանցուած ըլլալով, մեր գիւղի ազգային և ուրախութեամբ պիտի ողջունեն այս նոր ձեռնարկութիւնը և

անոր յարատեւութեանը համար իրենց ձեռքն առնուելու պիտի շնորհեն, որպէս զի ընկերութիւնն աւելի ևս զարգանալով կարող ըլլայ մեծ ամեծ ծառայութիւններով տառապեալ ազգայնոց վիճակը լաւացնել և հետեւաբար աղքատաց թիւն օր աւուր պակսեցնել:

Խնդրելով որ բարեհաճիք նամակիս և Աղքատախնամ ընկերութեան յայտարարութեանը ձեր պատուական լրագրոյն մէջ տեղի չնորհել Մնամ և ալն:

Աղքատախնամ ընկերութեան յայտարարութիւնը բաւական երկար ըլլալուն համար չիւրալով հրատարակել, արժան կը համարինք համառօտ բովանդակութիւնն ընել:

Հայտարարութիւնը կը ծանուցանէ թէ տիկնայն պատուական ընկերութիւնն արգէն Տնօրէն ժողովի մ'անմիջական հսկողութեամբ գործի սկսած է, և առայժմ իրեն պաշտօնատեղեկներած է Օրթալիւղի Հոլիսիմանց վարժարանը: Հետեւաբար գիւղին ազգային աղքատներն ուղղակի Տնօրէն ժողովոյ պիտի դիմեն իրենց վիճակն ու կացութիւնը յայտնելու համար:

Սակայն նորահաստատ ընկերութիւնն գեա պէտք եղածին չափ նիւթական կարողութիւն չունենալով՝ առայժմ իւր խնամաւորութիւնը պիտի ըլլայ:

Խնդնական հիւանդ տառապեալը բժիշկ հոգալ, չքաւոր և անկարող ծերերը նիւթապէս միկիտարել, բազմաթիւ մանր աղայոց մայր եղող աղի տառապեալ և անօգնական կանանց նպաստամատոյց ըլլալ, և վերջապէս հոգ տանիլ ըստ իւր կարողութեան աղքատին թշուառ վիճակը լաւացնելու:

Թէպէտ և յայտմ կը բովանդակի իւրենց խնամատարութիւնը, այսու ամենայնիւ կը խոստանան աւելի ընդարձակել զայն եթէ ընկերութիւնը հետզհետէ յառաջադիմէ:

Աստի բարեբեք ազգայնոց բարոյական և նիւթական ձեռնուռութեանց վրաս հելով, Տնօրէն ժողովն հինգ զօրուշ կամաւոր տուր մը սահմանած է, որոց հասցիքը իւր խնամատարութեանը պիտի ծառայէ:

Գանեպի հայ հասարակութիւնը՝ ազգային Սահմանադրական Աղքատութիւնն հաստատուելուն վրայ իր ուրախացումը թիւնն յայտնելու մտօք՝ յոյժ մ'ընտիր մեծ գործ նուէր զփած են Պատրիարքարանի խորհրդոյ անեւաններուն մէջ վրաւելու համար:

Գանեպի պատուարժան ժողովրդեան այս ազգասիրական գործը մեծ պատիւ կրնէ իրենց, և ընդհանուր ազգին գոյութեան ու շնորհակալեացն արժանի է:

Գանեպէն մարտ 30 թուով դրուած նամակի մը կը ծանուցանէ թէ տեղւոյն 140 տէր բաղիւղեալ ազգայնք, թէ՛ Երթուղի նուազ՝ այլ ուսումնասիրական եռանդով լի՝ մանչ տղոց ընդարձակ դըստըրոյ մը կանգնելէ և անոր կից աղջկանց համար ալ ուրիշ դպրոց մը կառուցանելէ՝ զատ, անոնց յարատեւ բարեկարգութեան համար պէտք եղած նիւթական միջոցներն ալ պատրաստելով, և տեղւոյն երեւելի ազգայնոց և պատուարժան եկեղեցականաց համախորհրդը հոգաւորաւ թեմովը դպրոցներուն ուսումնական դարգացումն ամեն փոքր և խնամք նուիրելով, փետրվար 23-ին կիրակի օրն ալ աշակերտաց և աշակերտուհեաց վեցամեայ քննութիւն մ'ըրեր են բազմաթիւ ազգայնոց և օտարազգի պատուաւոր անձանց ներկայութեամբ: և այն մանկուհիք որ վեց ամիս առաջ հայերէն աշխարհաբան խօսիլ անգամ չէին գիտեր, հայերէն քերականութեան, աղբային պատմութեան, քրիստոնէական փառ պետութեան և թեմագիտութեան մէջ բաւական գոհացուցիչ արդիւնք ցոյց տըւել են: որուն համար թէ՛ յառաջագիտական երանքներն և թէ՛ իրենց աշխատասեր վարժարանները քաջաբերական վարձատրութիւններ ընդունեն են:

Արգովեք Գանեպի հայ հասարակութեան այս ուսումնասիրական ջանքը և յարատեւութիւնը կը մաղթեն իրենց

այս անգամ ձեռնարկութեան որ իրենց ապագայ սերնդի քարտուղարութեան միջոց մը պիտի ըլլայ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փորձով կը տեսնենք որ շատ օգտակար ձեռնարկութիւններու նախապայքար մարտադրութիւն մէջ հայերէն կ'սկսի, բայց զգալի քանակութեամբ մեր փորձէն թերիչները լրացնող օգուտն անոնք կը քաղեն: Յարաւանութիւն բառը գոյգեալ նշանակութիւն չունի մեր ազգին մէջ: օգտակար ձեռնարկութիւնները զգալի քանակութեամբ մեր ձեռնարկութեան կը մնան և անոնցմէ տարածած օգուտներն ալ յուսադրուածին չափ իրական և արդիւնաւոր չեն ըլլար:

Այս նախադասութեանց օրինակները մի առ մի յիշենք աւելորդ կը համարենք: Խորհող զբաղմունքներու համար անժխտելի է այս: ու յիշենք մեր փորձով մենք խառնուելէ առաջ մեր փորձովը երբեմն նաեւ փաստին օտարներն արդիւնք կը քաղեն: Չենք նախանձիր օտարաց այս բաղադրութիւնները վրայ, բայց մեր ազգին այլընտրանք տալով մեր ընտանեաց ձեռնարկութիւններու արդիւնք մեր ազգին մէջ ալ լիովին վայելելու արդար փափաքին ալ չենք կրնար ծածկել:

Երկու տարի առաջ Անճանաւոր ընկերութիւն մ'ունէինք որ ազգային հասարակութեան և պանդուխտ ազգայնոց ճշմարտութեան ընթերցանութիւն, գիր, թուագիտութիւն և այլն կը սովորեցնէր: Այս ընկերութիւնն ի՞նչ եղաւ: Արժեքներ չունէր, քիչերու մարմին մէջ ձգեց իր օգտակար սերունդ, և այսօր յիշեալ ընկերութեան անդամներէն հազիւ մէկ քանին կը նշմարենք, որ գեալ յայտնութեամբ կաշխատին: Երբեք ալ պանդուխտ ազգայնոց վրայ նոյն ընկերութեան արդիւնքը փոքր 'ի շատ տեսնուեցաւ: բայց յարաւանութիւն չունէնալով ասպարէզն ուրիշներու թողուեցաւ:

Տեսնենք ի՞նչ կրնէ թափալարի Լեփքեար տաճիկէն լրացիր:

«Բանի մ'անձանց կողմէն Օսմանեան դատարանութեան ընկերութիւն մը կազմուեցաւ, որուն նպատակն է տաճիկ արհեստագործներու հաւաքականութեան վերաբերեալ գանձեր, թուականութիւն, և կարելի եղածին չափ տաճիկէն կարգաւ զբոնել սովորեցնել: Այս բանին համար յիշեալ ընկերութիւնը հատարաւոր կը թուութեան պաշտօնէն ալ հրաման և շուկայի մօտէն ալ դպրոց մ'ուղարկէ՝ խնդիր Բ. Գրսն ներկայացուեցաւ, և պէտք եղած հրամանն աւանդուեցաւ:

«Ասանուտ նայելով, տոյն ընկերութիւնը երկու կարգ անգամներէ կը բաղկանայ: մէկ կարգը անձանց դպրոցին մատակարարութիւնն ու գաւառականութեանը պիտի պարտաւոր, միւսն ալ որ և իցէ կերպով ընկերութեան նպատակին պիտի ծառայէ:

«Բնկերութեան խնդրած դպրոցը նորոգութեան կարօտ ըլլալով, Բ. Գրսնէն Լեփքեար պաշտօնատան յանձնուեցաւ շինութիւնը, և լինողին պէս դատարանութիւնները պիտի սկսին: Առաւանակները մէկուկէս կամ երկու ժամ ընթերցանութեան, հաշուաւորութեան, երկրաչափութեան, աշխարհագրութեան և քիչ մ'ալ պատմութեան դաս խառնութիւն պիտի ըլլայ: Աշակերտաց պէտք եղած դիրքերն և ուրիշ պիտոյքներն ընկերութեան կողմէնէ ձրի տրուելէ զատ, ուսանողաց ալ քաջակամութեամբ փորձառութիւններ պիտի ըլլան:

«Այսպիսի դպրոցի մը առաջին անգամ հիմնարկութիւնն անշուշտ ասոր օգուտները վայելելու փափաքներուն շնորհակալեաց արժանի է: Այս ընկերութեան հիմնարկները տեղութեան պաշտօններուն մէջ գանուող զբաղմունքներն են, որ իրենց պաշտօնէն դուրս հանգրտեան ժամանակին մէկ մասը տգէտներուն կը թուութեանը նուիրելու աղին զի:

տաւորութիւնն ունեցած են, համարուած ըլլալով որ ազգային անձանց բուն հանգրգանք իրենց նմանեաց օգտին աշխատելով ձեռք կը բերուի: »

«Երաւարկայէն ապրիլ 2 թուով բաղմունքի ստորագրութեամբ մեզ ուղարկած նամակ մը ցաւօք սրտի կը ծանուցանէ, թէ անգլոյն այլազգ բնակիչներէն խումբ մը սրկիաներ և անոնց հետ ալ խել մը հայ սրկիաներ տեղեւոյն ազգայնոց մատակարարութեան անմեղութեանը դարան լարելով՝ անոնց բարոյական զեղծմանը պատճառ կըլլան, և անգլոստալ թուութեանը պարիւշ ընտանեաց հանգրտութիւնը կը վնասէ մինչև անգամ տուններէն, դպրոցներէն և որ առաւել սարսափելի է՝ Ա. եկեղեցեաց մէջէն տղայք բռնելով և իւրենց դաւանական կրօնը գոհ ընելով:

Տարակոյս չունինք որ այսպիսի խժաւան ամբարշտութեան մը յանգրտները կայսերական բարեխնամ կառավարութեան արդար ցատու մը կը հրաւիրեն իւրենց վրայ, բայց չենք գիտեր թէ տեղեւոյն Գեր. առաջնորդը որ իր հօտին բարոյական պիտոյքն հոգալու սրտգլան պարտաւորութիւնն ունի, ինչո՞ւ գոնէ ազգային կեդրոնական Ա. արքութեան չգրեն, որպէս զի այսպիսի բարոյց ապահանջութեան ժամանակ մը դարմանը խնդրէ Բ. Գրսնէն, և Սոգոմայ ու Գ. Բ. միայ յանգրտն մնացողներն իրենց արժանի պատիժն ընդունին:

«Երբ յուսանք որ ազգային Ա. արքութիւնն այս քաջմեղէն շարժաց առաջնէն առնելու համար չփախնիր իր կողմէն պէտք եղածը անօրինելու:

«Պէտք է նաեւ ապրիլ 13 թուով գրուած նամակ մը կը ծանուցանէ թէ Ա. Երանանի Բ. Երանանի նախնային բնակիչները տեղութեան կողմէն հրամայուած կարուածագրութեան ընդգրկմանով, Ա. Երանանի կառավարչէ՝ Ա. Եր. համար փաշան հարկադրուել է քանի մ' օր առաջ գոնի մը կանոնաւոր դրոք զբիւլ և զինու զօրութեամբ հնապանդեցնել յիշեալ նախնային բնակիչները:

«Երբ նախնային ապրիլ 13 թուով լուր կուտան թէ Իսմայիլիայէն մէկնող անուշ ջուրի ջրանցքը լինել, և ջուրը կատարեալ յաջողութեամբ Սայտայի ծոցը եկեր է:

«Մարտիկայէն ապրիլ 15 թուով կը գրեն թէ Նորոնի կառավարութեան փաշայի զինու զեապարտ նոյն իրիկունը հոն հասեր է Երբ նախնային թուականը նաեւ, և նաեւ երբ ժամանակ զինուորական պատուով և թնդանութիւնը արձաւ կուրծով ընդունել է:

«Հայկական գրուած նամակ մը կը ծանուցանէ թէ կին մը երեք գլխով մանչ գաւակ մը ծնել է որ երեք ժամ տարբեր ու մեռել է:

«Երբ նախնային լրագրոց մէջ կը կարդանք թէ Մանգիսթերի մէջ Ռ. Երանանի Միւլին անուն մէկը 1854 էն 'ի վեր յիշեալ քաղաքին մէջ երեք այլ և այլ կին տուել է: բայց չորրորդ մ'ալ հայտնութեան վրայ եղած ժամանակ իր առաջին օրինակը կինը խնամալով ոտը երկը և զանի գառատանի մասներ է:

«Պարտիզոն ծառայողներուն մէջ բուսած փառասիրտ խոտերը ջնջելու համար հետեւեալ պարզ զեղը կը կարգանք երկրագործական թերթի մը մէջ:

Երկրի խոտերը մը մէջ 50 լիտր ջուր 5 քիլոգրամ կիր և մէկուկէս քիլոգրամ ծծմբի փոշի զնելով և իրար խառնելով պէտք է եռացնել, և պարզէն ետքը այս բաղադրութեան կրկնապատիկին չափ հատարակ ջուր լեցնել վրան և անպիտան խոտեր բուսած տեղերն անով ջրել:

«Ամերիկայի միացեալ նահանգաց Մատարկութիւն նահանգէն Բոյլը Բոյլը պրէսի անուն ճարտար մեքենագործ մ'այս օրերս չորեքարժ նոր կտոր մը նաւեր է որ ամեն տեսակ ճարտու վրայ կրնայ երթալ, որչափ խորտուրորտ և անհարթ ալ ըլլայ: Այս նորաշէն կտորը երեք նստա-

լան ունի, և կառավարը կրնայ թէ՛ ձախ և թէ՛ յաջ ուղղել, և երկէն կտոր մը չափ զիւրութեամբ դարձունել և կեցրնել: Ա. Երանանի երկու ձիու ոյժ ունի և եօթնհարիւր լիտր կը կշռէ եղեր:

«Դուռնալին մէջ կը կարգանք թէ մայրաքաղաքին հարուստ սեղանաւորներէն մէկուն սպասուորը հետեւեալ նորօրինակ զոյգութեան մէջ բռնուել է:

Այս ճարտար գոյր շուն մ'ունի եղեր, և ամեն անգամ ստակ համարժեք մանակը քանի մ' ոսկի կուտայ շանը որ հայր պէս կը կշէ, և իրիկունը տուն երթալէն ետեւ դեղ մը կը խնդրէ շանը և կըլլ տուած ոսկիները փոխել կուտայ եղեր:

Բայց այս ներդրութիւնն երկար ժամանակ գործելէ ետեւ երեան եկնելով, ոստիկանութեան ձեռք իր տանը մէջ քրնուութիւն մ' եղեր և շանը փոխել տուած ստակները գանելով օրինաւոր աշխուհ հատուցել են:

«Խուրդը (գեանի մուկ) ընդհանրապէս զաշուրու փնասակար կենդանի մը համարուած է երկրագործներէն, որոնք կը կարծեն թէ անկող արմատներով կը սնանի յիշեալ կենդանին: Սակայն Յուրիկի մէջ Պ. Ա. Եղեր անուն ճարտար երկրագործն այս կենդանիին վրայ եղած նախադրմունքը ջրելով՝ կը հաստատէ թէ ոչ միայն անկող փնաս չենք խուրդը՝ այլ ընդհանրապէս օգտակար ալ է:

Սակայն իր այս գիւտը լոյ խօսքով եղած չեղանակու համար կը հաստատէ թէ բնագէտ մը ոչ և այլ երկիրներու մէջ բռնուած 15 խուրդի ստամոքսը բանալով գտեր է՝ որ անկող փնասակար ձիւնքը բուն փնոցորդէն զատ ուրիշ բան չկայ անոնց մէջ: ոչ արմատ ոչ խոտ և ոչ որ և իցէ բոյս մը, որոնք ձիւնքէն աւելի գոռարամարս ըլլալով՝ պէտք էին դանդաղ խուրդներուն ստամոքսին մէջ եթէ կերած ըլլային:

«Ա. Եղեր այս փորձով ալ գոհ չըլլալով, մեծ գոռարութեամբ երկու խուրդ կը բռնէ և հողով լեցուն սակառի մը մէջ դնելով վրան ալ մարդաբանին, բազմութիւ սողուններ, որդեր և արմատներ կը լեցունեն, ինչպէս նաեւ փոքր մուկ մը գոր սակառին մէջ կը գոցէ:

Ինն օրէ ետեւ սակառը բանալով կը տեսնէ որ երկու խուրդն այն բազմութիւն թրթռնելով, սողուններ, ձիւնքեր, ինչպէս նաեւ փոքր մուկն իր մորթովն սակառիներէն լարել կերեր են՝ առանց արմատի մը դաշելու և առանց խոտ մ'ուտելու:

Եսկէ զատ՝ խոտերու հետ խառնելով հում մսի կտորուանք ալ զրեր է առաջին, բայց խուրդները միայն կերեր և խոտերէնէն չեն դպեր: յետոյ միայն խոտերէնէն տուել է ուտելու և 24 ժամէն վերջը խուրդները ստակած գտեր է:

Ուրիշ բնագէտ մ'ալ հաշիւ ըսել է որ 2 խուրդ մէկ տարուան մէջ 20000 ձիւ կուտեն:

«Մեր նախնային թուով հրատարակուած Ս. Փրիչեան հիւանդանոցի նուիրելու ցանկին մէջ, տպագրական քանի մը սխալները սպրդած են, զոր կը փութենք ուղղելու:

Նուիրելու պատման երեք թուի պիտի ըլլայ: իսկ բրնձը՝ որ 100 հօխայ ըլլաւ էր՝ 154 հօխայ պիտի ըլլայ:

ՊՐԻՍՏԻ ՊԱՇՏՈՒԱԿԱՆ

ՀԵՌԱԳՐԱԼՈՐ

Փարիզ 27 ապրիլ.
Օմ. Բոնոպիտէ՝ 551/4 553/8
Օմ. Փրիստուութիւն 1865/1 550
Օմ. Պանքա՝ 792 50:

ԼՈՒՐԱՅ 27 ապրիլ.

Օմ. Բոնոպիտէ՝ 521/8 551/8
Օմ. Փրիստուութիւն 1858/1 69 69/2
Օմ. Փրիստուութիւն 1862/1 741/2 72:

ՏՆՏԵՍԵԿԵՆ

Յաջողութիւնը կամ ձախողութիւնը երկրագործական լաւացմանը գործառնուած իրանցը մէջ:

Գ.ՈՒՍԻ Բ.

ՆԻԻԹԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԲ

ԴՐԱՄԱԳՈՒՄ

(Շարունակութիւն Տես թիւ 653)

Երկրագործական գործառնութեան մը յատկացեալ դրամագլխոյ մէջ ալ այս գործէն սպասուելէք յաջողութեան զբաղմունքը: Եթէ այս դրամագլու ին անբաւական է, 'ի նանիր երկրագործն այլուստ ամենայն մար պայմաններու մէջ կը գտնուի, 'ի նանիր այն հիմնութիւնները, գործունէութիւնն ու կարգական ողին կուենայ, ուրիշ իւր գործառնութեան յաջողութիւնը կրնային ապահովել: Իւր ամեն գործողութեանց մէջ կապուած կը գտնուի այնպէս որ՝ եթէ չկործանի, այլուստ լաւ մտածեալ գործառնութեան մը մէջ, գոնէ ասկէ սպասած վաստակներուն խիստ հեռու կատարածի մը զիսկը կը տեսնայ: Երկրագործութիւնը՝ ինչպէս բոլոր այն ճարտարութիւններն որոց նպատակն է արտադրութիւնը, նախնական դրամագլխոյ մը գործածութիւնը կը պահանջէ: Ենթադրական դրամագլու մը լրացուցանելու համար վաստակները գործածել ուղղին, ամենէն մոլորական հաշիւ մ'ընել է: Վասն զի դրամագլուին այս վաստակին ստեղծմանը ամենէն անհրաժեշտ պայմանն է:

Մարդ մը չկայ որ չգիտնայ թէ երբ կալուածի մը մշակական գրութեանը մէջ գրել խաւոր փոփոխութիւններ ընել ուղղին, պէտք է մշակութեան առաջին տարիներուն մէջ շատ մը ոչ արժողութիւններ կրելու հարկաւորութիւնը յանձնառու ըլլալ: այլուստ՝ երկրագործական գործառնութեան մը սկզբնաւորութեանը մէջ, ուրիշ տեսակ ոչ արժողութեանց ալ պատրաստուելու է, քանի որ նոյն իսկ ամենէն փորձառու անձն անգամ գեալ չճանցած ազարակին մէջ՝ ստուգիլ այնպիսի սխալ մտքներ կրնէ, որ գոնէ ընելէ վաստակները կը պակսեցնեն: Այս պարագային բուն մէջ, իր ներգործականութեան կախանաւոր գործառնութեան մէջ գտնուող գործառնութեան մը գնացքին անբաւական դրամագլխով մը գործի սկսիլ, այնպիսի սխալները մ'է, որ գրիթէ միշտ կամ ուրոտընդոտ անկմամբ մը և կամ մէկ քանի տարուան ամուլ ձգանց ծանր մահու տաղանալով կը վճարուի: Իւր ուղիւնութեամբ ըլն ու ճարտարութեամբն անուանի երկրագործ մը լաւացման մէջ զանգաղութեամբ յաջողութեան ալով կրնայ երբեմն իր դրամագլուին յաւաքառութեամբ առնել, միայն իր մշակութիւնը հետ դնելէ կը կատարեալագործի: բայց միայն գեղական բնաչաց դասին մէջ, և իրենց սեպհական անապառ անտեսութեամբն է որ այս դրամագլխոյն նոյն իսկ ճարտարութեամբ ստեղծուի կը տեսնուի: ուրիշ որ և իցէ պարագայի մէջ, պէտք եղած բաւական դրամագլու չունենալով գործի սկսիլ մեծ անխախտութիւն է:

Այլուստ մը մշակութեանը համար պէտք եղած դրամագլխոյ քանակութիւնը երբեմն այս կարուածին հասին կամ փութին համեմատութեամբ կորոշուի: Այս հաշուական հիմն բոլորովին թերի է՝ վան զի, այն նահանգին մէջ՝ ուր քորձը հեկտարի գրելու 100 Ֆրանքի հասած է, ենթադրելով 100 հեկտարնոց կարուած մը, որուն յատկացեալ ըլլայ 40000 Ֆրանք իրիւր դրամագլուին, որ չորս անգամ կալուածին հասը կը նշանակէ, որ է 10000 Ֆրանք, շատ տեղեր այս դրամագլու լաւաւ կան է: Բայ եթէ մի և նոյն դրամագլու լաւը գործածուի նոյնպէս 10000 Ֆրանք փորձ ունեցող կարուածի մը վրայ, հողին հեկտարը միայն 20 Ֆրանք փորձ բերող նահանգի մը մէջ, դրամագլուին այս կալուածին (որուն տարածութիւնը 500 հեկտար կըլլայ) ձիւր պէտք եղած դրամագլուին խիստ պակաս կըլլայ:

Մշակութեան դրամագլխոյ որոշմանը

Եյս կենսագրութիւնը՝ որ ժամանակ

Հառաջեկայ Ս. Չափիկ երրորդ օրը՝ ապրիլ 21՝ Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողով՝ պիտի գումարուի Բերա Համալսեաց ընկերութեան ժողովարանը՝ ալէ փոքր թիւ 13 :

ԶԱՆԵ ԻՒՂ
 ԲՈՒՐՈՎ Ի Ն ՄԱՔՐՈՒԱԾ
 ԱԽՈՐԺԱՀՈՏ ԵՒ ՔԱՂՅՐԱՀԱՄ
 Ուրիշ ամեն ձևան իւղերուն մէջայս
 միայն չունի ձևան հոտ և համ: Շղջ
 ռիէ դեղադործին գտած միջոցովը պատ-
 րաստուած:
 Կը դանուի Բէրա Տէլա Սուտայի
 դեղարանը:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ
Կ. ՊՕԼԻՍ ԶԻՆԻԼԻ ԽԱՆ